

*ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ*

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ



2015-2020 թթ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>Կազմակերպության զարգացման պատմությունը-----</i>	<i>3</i>
<i>Տարածաշրջանային պետական քոլեջի տեսլականը-----</i>	<i>3</i>
<i>Տարածաշրջանային պետական քոլեջի առաքելությունը-----</i>	<i>4</i>
<i>Տարածաշրջանային պետական քոլեջի նպատակը-----</i>	<i>4</i>
<i>Տարածաշրջանային պետական քոլեջի խնդիրները-----</i>	<i>5</i>
<i>Տարածաշրջանային պետական քոլեջի գործառույթների բնույթը և շրջանակները---</i>	<i>5</i>
<i>Տարածաշրջանային պետական քոլեջի կողմից մատուցվող ծառայությունները-----</i>	<i>8</i>
<i>Տարածաշրջանային պետական քոլեջի դերը սլվյալ ոլորտում-----</i>	<i>9</i>
<i>Տարածաշրջանային պետական քոլեջի կառավարման, ներքին հսկողության քաղաքականությունը-----</i>	<i>10</i>
<i>Տարածաշրջանային պետական քոլեջի կարողությունների զարգացման ծրագիր-----</i>	<i>10</i>

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայության տակ գործող Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որն ունի 49 տարվա պատմություն: Քոլեջը հիմնադրվել է 1966 թվականին և կոչվել է Հրազդանի ինդուստրիալ-տեխնոլոգիական տեխնիկում: 2000 թվականին տեխնիկումը վերանվանվել է Հրազդանի պետական քոլեջ , իսկ 2011 թվականի ապրիլի 21-ի թիվ 346-Ա/Ք հրամանի համաձայն՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ: Իր գոյության տարիներին քոլեջը բազմապիսի մասնագիտություններով բազմաթիվ կադրեր է պատրաստել, որոնք աշխատել և աշխատում են տարածաշրջանի մի շարք հիմնարկ-ձեռնարկություններում:



Քոլեջը տարիների ընթացքում ձեռք է բերել բարձր վարկանիշ՝ իր մատուցած կրթությամբ, մրցունակ կադրերով և իրականացված մշտադիտարկումների արդյունքներով:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Տարածաշրջանային պետական քոլեջը իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում իրականացնում է որակյալ կրթության մատուցումը շահագրգիռ կողմերին՝ ապահովելով կրթության որակի արտաքին և ներքին գնահատման չափանիշները՝ որակի կառավարման ներքին համակարգի ձևավորման և մասնագիտական

կրթության որակի ապահովման համար սահմանված չափորոշիչների պահանջները կատարելու միջոցով:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈՒԷՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Տարածաշրջանային պետական քոլեջը.

- ✓ ապահովում է որակյալ մասնագետների պատրաստումը՝ տնտեսության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան,
- ✓ ապահովում է կրթական ծառայությունների ճկունությունը աշխատաշուկայի փոփոխությունների նկատմամբ,
- ✓ ապահովում է կրթական բարձրակարգ նվաճումների տարեցտարի արագացող աճը,
- ✓ զարգացնում է տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժը,
- ✓ ստեղծում է օպտիմալ պայմաններ արդյունավետ և որակյալ ուսուցման համար՝ ցանկացած տեղում և ցանկացած ժամանակ (էլեկտրոնային ուսուցում):

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈՒԷՋԻ ՆՊԱՏԱԿԸ

Քոլեջի նպատակն է՝ կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրմամբ՝ ավանդական, ինչպես նաև նպատակային փորձարարական և էլեկտրոնային ուսուցման կարճաժամկետ ծրագրերի իրականացման ու տարբեր կազմակերպությունների, այդ թվում ուսումնական հաստատությունների ընդգրկմամբ ստեղծված ցանցային համակարգի ձևավորման շնորհիվ դառնալ Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական համակարգի զարգացման գերազանցության և տարածաշրջանային բազմագործառույթային կենտրոն՝ ստանձնելով կրթական բարեփոխումներն առաջնորդողի, տարածողի դերը՝ ապահովելով որակյալ մասնագետների պատրաստումը՝ աշխատաշուկայի պահանջներին և անձի պահանջումներին համապատասխան:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈՂԵԶԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը ունի հարուստ ավանդույթներ և մեծ ներուժ որակյալ միջին մասնագիտական ուսուցում իրականացնելու համար: Ապագայում նախատեսվում է զարգացնել այդ ներուժը գրեթե բոլոր ոլորտներում.

1. Ուսուցման գործընթացի կատարելագործում՝ հիմք ունենալով ուսուցման ակտիվ, ուսանողակենտրոն մեթոդների ներդրումը
2. Մասնագիտական կրթության բնագավառում ժամանակակից մոտեցումների կիրառում, հմտությունների և կարողությունների ձևավորմանը միտված ուսումնական փաստաթղթերի և նյութերի մշակում
3. Շարունակական կրթության ծրագրերի իրականացում, պետական, ինչպես նաև հավատարմագրված բուհերի հետ եղած կապերի ամրապնդում, նոր պայմանագրերի կնքում
4. Առարկայական ծրագրերի մշակում՝ էլնելով մասնագիտական գիտելիքների յուրացման արդյունավետությունից, ինչպես նաև աշխատաշուկայի ժամանակակից պահանջներից
5. Գործատուների հետ կապերի ակտիվացում: Գործատուների ներգրավում ուսումնական, ծրագրային փաստաթղթերի մշակման գործընթացում, շրջանավարտների պետական որակավորման հանձնաժողովների աշխատանքներում, նաև նրանց հնարավորությունների արդյունավետ օգտագործում՝ ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպման, աշխատանքի տեղավորման գործում
6. Մասնագիտական ուսուցման և վերապատրաստման լրացուցիչ կարճաժամկետ դասընթացների կազմակերպում և իրականացում

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈՂԵԶԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ **ԵՎ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ**

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը իր կանոնադրության համաձայն կարող է իրականացնել հետևյալ գործառույթները.

- միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն, հանրակրթության, լրացուցիչ կրթության կազմակերպում,
- արտադպրոցական դաստիարակության կազմակերպում,
- նախապատրաստական դասընթացների կազմակերպում,
- մասնագիտական ուսուցման դասընթացների կազմակերպում,
- կադրերի վերապատրաստում, վերատրակավորում և որակավորման բարձրացում,
- գիտահետազոտական աշխատանքների իրականացում,
- ուսումնասիրտադրական, արտադրական գործունեության և սպասարկման ծառայությունների իրականացում,
- հրատարակչական գործունեության իրականացում,
- սովորողների հանրային սննդի ապահովման կազմակերպում,
- սովորողների և աշխատողների հանգստի կազմակերպում,
- մշակութային գործունեության իրականացում:

Որպես տարածաշրջանային , բազմագործառնության հաստատություն՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը մարզի միջին և նախնական մասնագիտական 10 ուսումնական հաստատությունների հետ 2012 թվականին կնքել է մտադրությունների հուշագիր, որով համաձայնել են.

- Բոլոր հաստատությունների անդամակցությամբ ձևավորել Կոտայքի մարզի նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանց, որի գործունեության հիմնական նպատակներն են՝ Կոտայքի մարզում ՄԿՈՒ հեղինակության, վարկանիշի և գրավչության , դրա որակի, հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացումը և սոցիալական գործընկերության ընդլայնումը,
- Առավելագույնս համագործակցել հետևյալ բնագավառներում՝
 - ✓ ՄԿՈՒ համակարգի մարդկային ռեսուրսների կարողությունների շարունակական հզորացում՝ հաստատությունների կառավարման խորհուրդների անդամների, վարչական համակազմի և դասավանդողների փորձի փոխանակման ու վերապատրաստման , ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացման միջոցով,

- ✓ Ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակում և ներդրում՝ պետական կրթական չափորոշիչների պահանջների տեղայնացման և կիրարկման միջոցով,
 - ✓ Նյութատեխնիկական բազայի հարստացման և ուսումնառության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,
 - ✓ Գործատուների հետ համագործակցության ընդլայնումը՝ մասնագիտական կրթության և ուսուցման կազմակերպման և իրականացման գործընթացում,
 - ✓ Կարիերայի կենտրոնների ստեղծում առանձին հաստատություններում և մասնագիտական կողմնորոշման աշխատանքների իրականացում,
 - ✓ Եվրոպական երկրների ՄԿՈԻ հաստատությունների համագործակցության լավագույն փորձի ուսումնասիրում,
 - ✓ ՄԿՈԻ ոլորտում գործունեություն իրականացնող այլ, այդ թվում՝ արտասահմանյան ՄԿՈԻ իրավաբանական անձանց և ցանցերի հետ համագործակցության հաստատում:
- Նպաստել Կոտայքի մարզի հաստատությունների ցանցի կայացմանը, շարունակական զարգացմանը և առաջխաղացմանը կրթության առավել բարելավված ծառայություններ մատուցելու նպատակով:
- 2014 թվականի հոկտեմբերին Հրազդանի պետական բժշկական քոլեջի հետ կնքվել է օժանդակության և համագործակցության հուշագիր, որով համաձայնել են .
1. Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում իրականացնել Հրազդանի պետական բժշկական քոլեջի դասախոսների վերապատրաստում,
 2. Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում կազմակերպել Հրազդանի պետական բժշկական քոլեջի ուսանողների արտադրական և ուսումնական պրակտիկաները,
 3. Կատարել դասախոսների , մասնագետների և ուսանողների , ինչպես նաև դասավանդման փորձի և մեթոդաբանության փոխանակում,
 4. Հնարավորություն ընձեռել Հրազդանի պետական բժշկական քոլեջի դասախոսներին և ուսանողներին օգտվել Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում առկա լաբորատորիաներից, գույքից, տեխնիկական միջոցներից և գրադարանից:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2015 թվականի դրությամբ քոլեջն իրականացնում է միջին և նախնական մասնագիտական կրթական ծրագրով մասնագետների պատրաստում հետևյալ մասնագիտությունների գծով.

1. 2401-«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» (միջնակարգ ընդհանուր և հիմնական ընդհանուր կրթության հիմքով),
2. 2915-«Գազամատակարարման սարքերի և համակարգերի տեղակայում և շահագործում»(հիմնական ընդհանուր կրթության հիմքով),
3. 0601-«Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ»(միջնակարգ ընդհանուր և հիմնական ընդհանուր կրթության հիմքով),
4. 2203-«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», (միջնակարգ ընդհանուր կրթության հիմքով),
5. 0210-«Թարգմանություն և սպասարկման կազմակերպում» (միջնակարգ ընդհանուր կրթության հիմքով),
6. 0514-«Դիզայն» (միջնակարգ ընդհանուր և հիմնական ընդհանուր կրթության հիմքով),
7. 2915-«Գազային սարքերի և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» (հիմնական ընդհանուր կրթության հիմքով, նախնական մասնագիտական ուսումնական ծրագրերով),
8. 2302-«Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» (միջնակարգ ընդհանուր կրթության հիմքով):

Նշված բոլոր բաժիններում ուսուցումը իրականացվում է վճարովի և անվճար հիմունքներով և ուսուցման առկա ձևով:2401, 2915, 0601, 2203 և 0514 մասնագիտությունների համար գործում է նաև 9-ամյա կրթության բազայի հիմքով ուսման ձևը: Քոլեջի ուսանողների մոտ 15 %-ը այլ մարզերից են: Տարածաշրջանային պետական քոլեջի կողմից մատուցվող ծառայությունների հիմնական շահառուները հիմնական և ավագ դպրոցների շրջանավարտներն են:Ուսուցման շահառուներ են նաև ձեռնարկություններում և կազմակերպություններում աշխատող և որակավորում չունեցող անձինք , համայնքը, տարբեր անհատներ:

Քոլեջը, առաջնորդվելով պետական կրթական չափորոշիչներով, իրականացնում է մասնագիտական կրթություն՝ պատրաստելով արդի աշխատաշուկայի պահանջներին բավարարող կադրեր:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԴԵՐԸ ՏՎՅԱԼ ՈԼՈՐՏՈՒՄ

Նշված մասնագիտությունների գծով միջին մասնագիտական կրթական ծրագրերով կրթական ծառայություններ մատուցելու առումով քոլեջը հանդիսանում է մարզի բազմագործառության և տարածաշրջանային կենտրոն: Քոլեջում կան մասնագիտություններ , որոնք պահանջված են մեր տարածաշրջանում՝ 2302 մասնագիտությունը՝ սպասարկման կազմակերպիչ որակավորմամբ, 2915՝ գազային սարքավորումների շահագործող, և 0210՝ թարգմանիչ-մեկնեջեր: Այս երեք մասնագիտությունները տարածաշրջանում մեծ պահանջարկ են վայելում և մրցունակ են շուկայում:

Քոլեջն ունի որոշակի առավելություններ, որոնք այս պահին նրան շուկայում առաջատար են դարձնում: Դրանք են.

- Հազեցած է համակարգչային նոր տեխնիկաներով և ունի 3 համակարգչային սենյակ:
- Ունի նոր կահույքով հազեցած լսարաններ:
- Ունի տեխնիկայով և սարքավորումներով համալրված լաբորատորիաներ:
- Ունի կահավորված հյուրանոցային սենյակ, ադմինիստրատիվ տարածք՝ 2302 մասնագիտության գործնական աշխատանքների կազմակերպման համար:
- Ունի կարճաժամկետ դասընթացներ կազմակերպելու համար նախատեսված կարի արհեստանոց, վարսավիրանոց, խոհանոց՝ համապատասխան բոլոր միջոցներով:
- Վերանորոգված և հազեցած սպորտդահլիճ:
- Վերապատրաստված և համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ:
- Կենտրոնական ջեռուցման համակարգ:
- Բարենորոգված շենք, բարեկարգ տարածք:
- Քոլեջում ուսուցումն իրականացվում է կարողություններին միտված ուսումնական ծրագրերով:
- Քոլեջը գտնվում է մարզկենտրոնում և տրանսպորտային առումով մատչելի է:

0601, 0514 , 2915, 2203 մասնագիտությունների գծով կայուն պահանջարկ գոյություն ունի, որովհետև ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու ծրագիր ունեցող անձանց շրջանակը կայուն մեծանում է , և նրանց համապատասխան մասնագետ աշխատողներ են պետք:

**ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈՒԷԶԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ , ՆԵՐՔԻՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Քոլեջի կառավարման մարմինները.

1. Հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության
2. ՀՀ կրթության և գիտության նախարարությունը(այսուհետ՝ Լիազորված մարմին)
3. Քոլեջի կոլեգիալ կառավարման մարմինը՝ Քոլեջի խորհուրդը
4. Քոլեջի գործադիր մարմինը՝ Քոլեջի տնօրենը

Քոլեջն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, Հիմնադրի որոշումներով, Լիազորված մարմնի հրամաններով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ:



Քոլեջի տնօրենը քոլեջի ներքին գործառույթները և հսկողությունը իրականացնում է փոխտնօրենների, հանձնաժողովների ղեկավարների, կուրսղեկների միջոցով:

**ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈՒԷԶԻ ԿԱՌՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Քոլեջը զբաղեցնում է 3600 քառ. մ տարածք, ունի մեկ մասնաշենք:Շենքը հիմնանորոգված է , ունի նորագույն տեխնիկական միջոցներով հագեցած կաբինետներ, լաբորատորիաներ, լսարաններ, 3 համակարգչային սենյակ, նորագույն մարզագույքով մարզադահլիճ և խոհանոց, ժամանակակից գույքով վարսավիրանոց, կարի արհեստանոց, ուսումնական նպատակով կահավորված հյուրանոցային սենյակ, զոդման, փականագործական և կենցաղային զագային սարքավորումներով կահավորված արհեստանոց:Ուսուցումը քոլեջում կազմակերպվում է ժամանակակից ձևերով և մեթոդներով՝ հիմքում ունենալով ավանդական մեթոդների լավագույն և արդարացված տարբերակները:

Քոլեջն ունի որակյալ, վերապատրաստված և բազմափորձ դասախոսական կազմ: Հիմքում ունենալով վերը նշվածները՝ 5 տարիների ընթացքում նախատեսվում է զարգացնել կարողությունները հետևյալ ուղղություններով.

1. Յուրաքանչյուր տարի կազմակերպել մասնագիտական, մանկավարժական վերապատրաստում ինչպես մեր քոլեջի դասախոսների, այնպես էլ տարածաշրջանի մյուս քոլեջների դասախոսների համար: Բացի այդ, ուսումնական գործընթացի որակը բարելավելու նպատակով համագործակցել տարածաշրջանի մյուս քոլեջների, ինչպես նաև բուհերի համապատասխան մասնագետ-դասախոսների հետ:



2. Քոլեջում կազմակերպել մասնագիտական ուսուցման և վերապատրաստման լրացուցիչ կարճաժամկետ նոր դասընթացներ:
3. Շարունակել քոլեջում ձևավորված մշակութային ավանդույթները:
4. Նոր շահառուներ ընդգրկելու նպատակով քոլեջում կազմակերպել էլեկտրոնային և հեռավար ուսուցման դասընթացներ:
5. Քոլեջի գրադարանը թարմացնել նոր գրականությամբ, ինչպես նաև ստեղծել էլեկտրոնային գրադարան:
6. Հաշվի առնելով շուկայի պահանջները, քոլեջի նյութատեխնիկական բազան և տեխնիկական հնարավորությունները՝ թարմացնել քոլեջի մասնագիտությունների ցանկը, այսինքն հիմնական կամ կարճաժամկետ ծրագրեր ներդնելով՝ զարգացնել արհեստագործական հոսքը:
7. Հաշվի առնելով հանրապետության օրենսդիր դաշտը և քոլեջի կանոնադրությունը՝ հնարավորության սահմաններում քոլեջում կազմակերպել արտադրություն և մատուցել ծառայություններ(կարի արտադրություն, կենցաղային տեխնիկայի սպասարկում, վարսահարդարման ծառայություն, համակարգչային տեխնիկայի սպասարկում և այլն):
8. Յուրաքանչյուր տարի թարմացնել և համալրել քոլեջի գույքն ու սարքավորումները:
9. Ամեն տարի կատարել շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքներ: